ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«15» 06 2020թ. N.....

ՀՐԱՄԱՆ 40 -Լ

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի N 1758-Ն որոշման 2-րդ կետի «բ» ենթակետի երրորդ պարբերությունով և հիմք ընդունելով վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարների առավելագույն չափը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանի

15.06.2020

X

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս. Պապիկյան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
«15» 06 2020թ.
N 40-Լ հրամանի

ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

Ծառայությունների անվանումը	**Չափման միավորը**	**Մատուցվող ծառայությունների վճարը (ՀՀ դրամ)**
1. Երկրաբանական ֆոնդում առկա ընդերքի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով ֆոնդի ընթերցասրահում ֆոնդային նյութերի տրամադրում	հաշվետվություն/օր	7 000
2. Հանքավայրի (տեղամասի), հանքերևակման (մետաղային, ոչ մետաղային և ստորերկրյա հանքային ջրերի) պաշարների կամ կանխատեսումային ռեսուրսների առկայության և հանքային իրավունքով ծանրաբեռնվածության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում	տեղեկատվություն	25 000
3. Հանքավայրի (տեղամասի), հանքերևակման վերաբերյալ մասնակի (ըստ պահանջի՝ ներքոհիշյալ առանձին կետերի) տեղեկատվության տրամադրում		
1) Ընդհանուր տեղեկություններ հանքային շրջանի մասին	տեղեկատվություն	8 500
2) Հանքային շրջանի երկրաբանական կառուցվածքը	տեղեկատվություն	9 000
3) Հանքային շրջանի հիդրոերկրաբանական պայմանները	տեղեկատվություն	9 000
4) Աշխատանքների մեթոդիկան և ծավալները	տեղեկատվություն	8 500
5) Տեղամասի երկրաբանական կառուցվածքը և հիդրոերկրաբանական պայմանները	տեղեկատվություն	35 000
6) Հետազոտական աշխատանքների հիմնական արդյունքները	տեղեկատվություն	20 000

7) Հանքավայրի որակական բնութագիրը	տեղեկատվություն	20 000
8) Շահագործական պաշարների հաշվարկը	տեղեկատվություն	25 000
9) Աղյուսակային նյութեր	տեղեկատվություն	20 000
10) Գծագրական նյութեր	տեղեկատվություն	25 000
4. Հանքավայրի (տեղամասի), հանքերևակման վերաբերյալ ամփոփ տեղեկատվության տրամադրում	տեղեկատվություն	հաշվարկվում է ըստ պահանջի՝ 3-րդ կետով նշված ենթակետերի հանրագումարով
5. Երկրաբանական ֆոնդում առկա ընդերքի մասին տեղեկատվության պատճենահանում և տրամադրում		
1) փաստաթղթերի սև-սպիտակ պատճենահանում՝		
A_4 չափ (21x30)	յուրաքանչյուր էջի համար	50
A_3 չափ (32x40)	յուրաքանչյուր էջի համար	75
2) համակարգչային սկանավորում	1 մ^2	1 700
3) համակարգչային տպում	1 մ^2	4 900

Սույն հավելվածի՝

1) 1-ին կետով սահմանված երկրաբանական ֆոնդում առկա ընդերքի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով ֆոնդի ընթերցասրահից օգտվելու մուտքավճարը կազմում է 500 ՀՀ դրամ:

2) 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով տեղեկատվության տրամադրման վճարները սահմանված են էլեկտրոնային կրիչով տեղեկատվության տրամադրման համար: Տեղեկատվությունը թղթային տարբերակով (պատճենահանված) տրամադրման դեպքում վճարի չափը սահմանվում է տվյալ կետով սահմանված վճարի և 5-րդ կետով սահմանված ծառայությունների վճարների հանրագումարով:

3) 3-րդ կետով նշված յուրաքանչյուր ենթակետի տեղեկատվությունը տրամադրվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ա. տեղեկատվության շտապ՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում վճարը հաշվարկելիս կիրառվում է 1,5 գործակիցը,

բ. տեղեկատվության արագ՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում վճարը հաշվարկելիս կիրառվում է 2,5 գործակիցը:

4) 4-րդ կետով նշված ամփոփ տեղեկատվությունը տրամադրվում է ըստ 3-րդ կետի ենթակետերի պահանջվող տեղեկատվության քանակի անգամ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ա. ամփոփ տեղեկատվությունը շտապ տրամադրելու դեպքում տեղեկատվությունը տրամադրվում է ըստ պահանջվող տեղեկատվության քանակի անգամ 2 աշխատանքային օրվա ընթացքում,

բ. ամփոփ տեղեկատվությունն արագ տրամադրելու դեպքում տեղեկատվությունը տրամադրվում է ըստ պահանջվող տեղեկատվության քանակի անգամ 1 աշխատանքային օրվա ընթացքում: